ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> փետրվարի 2013թ. N 99

Ք.Արմավիր

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության քաղաքացիների ընդունելության, առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման բաժնի վարիչի 2013 թվականի փետրվարի 2-ի հ.20-1338 գրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան ուղարկված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատ/Արմավիր./ համայնքի բնակիչ Ռոզիկ Գևորգյանի Հայաստանի Հանրապետության Նախագահին ուղղված դիմումը և Արմավիրի մարզի Արմավիրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի 2013 թվականի փետրվարի 7-ի եզրակացությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Ռոզիկ Գևորգյանին հատկացնել 30000 /երեսուն հազար/ դրամ միանվագ օգնություն:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Ա. Հովհաննիսյան/՝ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ